ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ РЕГИОН
ВОСКЕАТСКОЕ СЕЛЬСКОЕ
УПРАВЛЕНИЕ

N 01-122

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

«03» 11 2015թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Ա . Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի կողմից 2015 թվականի հոկտեմբեր ամսվա ընթացքում արձակված կարգադրությունները և ընդունված որոշումները:

Առդիր 7 թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր

Գ. Ներսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

01 հոկտեմբերի 2015 թ. N 17 -Ա

## ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՈՒՄԲԻ ՎԱՐԻՉ ԵՊՐԱՔՍԻԱ ԵՂՅԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158- րդ , 159- րդ և 164- րդ հոդվածներով և հիմք ընդունելով Եպրաքսիյա Եղյանի դիմումը .

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի ակումբի վարիչ Եպրաքսիա Եղիյանին հատկացնել իրեն հասանելիք 2015 թվականի ամենամյա հերթական արձակուրդը 2015 թվականի հոկտեմբերի 1 -ից՝ 24 աշխատանքային օր տևողությամբ:
Աշխատանքի մեջ համարել 2015 թվականի նոյեմբերի 4–ից:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից :

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր Գ. Ներսիսյան

2015 թվականի հոկտեմբերի 1
գ. Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

01 հոկտեմբերի 2015թ. N 18 -Ա

## ՄՈՒՐԱԴ ԴԻՇԼԱՆՅԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158- րդ, 159- րդ և 164-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Մուրադ Դիշլանյանի դիմումը .

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի գյուղապետարանի պահակ Մուրադ Դիշլանյանին հատկացնել իրեն հասանելիք 2015 թվականի ամենամյա հերթական արձակուրդը 2015 թվականի հոկտեմբերի 1-ից՝ 20 աշխատանքային օր տևողությամբ:
Աշխատանքի մեջ համարել 2015 թվականի հոկտեմբերի 29–ից:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից :

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր՝ Գ. Ներսիսյան

2015 թվականի հոկտեմբերի 1
գ. Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ու Մ

«05» հոկտեմբերի 2015 թ. թիվ 11-Ա

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ - ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակարանային, աշխարհագրական, օբյեկտի անվանակոչման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N2389-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Ոսկեհատ համայնքի ավագանու 14.08.2006թ. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղական համայնքի փողոցների անվանակոչման, տների ու տնամերձերի համարակալման մասին» թիվ 2 որոշումը:

Ո Ր Ո Շ Ու Մ ԵՄ`

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղական համայնքում գտնվող քաղ. Կարինե Խաչիկի Մելքոնյանին պատկանող 04-081-029-024 կադաստրային ծածկագրով տնամերձին տալ Մաշտոցի 1/2 հասցե:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր Գ. Ներսիսյան

2015 թվականի 5 հոկտեմբեր
գ. Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

«12» հոկտեմբերի 2015թ. թիվ 12-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, <<Հանրաքվեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2015 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 01/02.1/3846-15 գրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2015 թվականի դեկտեմբերի 6-ին կայանալիք հանրաքվեի նախապատրաստման և անցկացման համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքում կազմավորել երկու ընտրական տեղամաս:

1) Մշակույթի տանը – Մաշտոցի 43 հասցե:

2) Մանկապարտեզի շենքում –Մաշտոցի 39 հասցե:

2. Սույն որոշման մեկական օրինակ ուղարկել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքները տիրապետողներին:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի ղեկավար Գնորգ Ներսիսյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար ՝ Գ. Ներսիսյան

2015թ. Հոկտեմբերի 12

Գ. Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

«12» հոկտեմբերի 2015թ. թիվ 13-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՏՈՒԿ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությամբ, <<Հանրաքվեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի ութերորդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրաւպետության Արմավիրի մարզպետի 2015 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 01/02.1/3846-15 գրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2015 թվականի դեկտեմբերի 6-ին կայանալիք հանրաքվեի քարոզչական պաստառները փակցնելու համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ հատուկ տեղերը՝

1) Մշակույթի տուն.Մաշտոցի 43 4-5 քառակուսի մետր մակերեսների վրա:

2) Մաշտոցի 29 շենք 4-5 քառակուսի մետր մակերեսների վրա:

2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի ղեկավար Գնորգ Ներսիսյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Գ. Ներսիսյան

2015թ. Հոկտեմբերի 12
Գ. Ոսկեհատ